

**ՇԻՐԱԿԻ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՌԵԿՐԵԱՑԻՈՆ-
ՋՐՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ (ՇԱՐԱՅԻ ԼԵՌԱՆ ՕՐԻՆԱԿՈՎ)**

**Մարտիրոսյան Լ. Մ., Սարգսյան Ռ. Ս., Աբրահամյան Վ. Մ.,
Սարգսյան Հ. Մ.**

Շիրակի մարզում էկոզոոսաշրջության զարգացման համար կարևոր են բնության հուշարձանները: Դրանք բնական օբյեկտներ են, որոնք իրենցից ներկայացնում են բացառիկ գիտական կամ պատմամշակութային արժեքներ:

Պետք է ասել, որ Շիրակի մարզի տարածքում գրանցված հուշարձանները լիարժեքորեն չեն ներկայացվում հանրապետության զբոսաշրջային փաթեթներում: Բացի այդ՝ հաստատված ցանկի ոչ բոլոր հուշարձաններն ունեն ՀՀ օրենքով նախատեսված անձնագրեր: Հստակ տրված չեն բնության հուշարձանների սահմանները և պահպանման գոտիները:

Բնության պահպանության միջազգային միության «IUCN Protected Areas Category» ուղեցույցում բնության հուշարձանը դասվում է երրորդ կատեգորիային և սահմանվում է որպես տարածք, որն ունի մեկ կամ մի քանի բացառիկ առանձնահատկություն: Այն կարող է լինել ինչպես բնական, այնպես էլ մշակութային:

«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքի հոդված 1-ում «բնության հուշարձան» հասկացությունը սահմանվում է որպես «...սահմանված կարգով առանձնացված գիտական, պատմամշակութային և գեղագիտական առանձնահատուկ արժեք ներկայացնող բնական օբյեկտ»:

Շիրակի մարզի տարածքում մեծ հետաքրքրություն են առաջացնում երկրաբանական հուշարձանները: Մրանք առաջացել են երկրաբանական երևույթների արդյունքում (հրաբխականություն, խզվածքներ, շերտաշարժ և այլն): Երկրաբանական հուշարձանները

կարող են լինել ինչպես առանձին, այնպես էլ ամբողջական համալիրներ: Երկրաբանական հուշարձանների մեջ առանձնանում են հրաբխային կառույցները, որոնք ներկայացված են լինում հրաբխային կոներ, խառնարանների, լավային ծածկոցների, քարանձավների և մի քանի այլ ձևերով:

Բանալի բառեր. բնության հուշարձաններ, ռեկրեացիոն գնահատում, հրաբխային կոն, զբոսաշրջություն, քարտեզ, քարանձավ:

Տեկտոնական հուշարձանների շարքին են դասվում կամարածալքերը, բեկվածքները, շերտագրական, քարագրական մերկացումները: Չանագան հանքանյութերի, օգտակար հանածոների և ապարների ելքերը:

Գեոմորֆոլոգիական հուշարձաններ են համարվում հողմահարման և տեղատարման հետևանքով առաջացած ռելիեֆի յուրահատուկ ձևերը՝ կիրճերը, մնացորդային բուրգերը և կամուրջները, հողմախորշերը, քարանձավները, բնական թունելները և կամուրջները, քարե քանդակները:

Առանձին խումբ են կազմում հնէաբանական հուշարձանները: Սրանց մեջ են մտնում կենդանիների և բույսերի բրածո մնացորդները, քարացրոնները, դրոշմները և յուրահատուկ մերկացումները:


Նկատի ունենալով ասվածը՝ մեր կողմից ուսումնասիրվել են ոչ միայն ՀՀ կառավարության կողմից հաստատված բնության հուշարձանները, այլև մարզի տարածքում գտնվող բոլոր այն բնական առաջացումները, որոնք մեր կարծիքով կարող են հետաքրքրի լինել զբոսաշրջիկների համար:

Հաշվի առնելով գիտական հողվածի ծավալային սահմանափակությունը՝ մեր կողմից սույն հողվածում ներկայացվում է Շիրակի տարածքում գտնվող երկրաբանական մեկ հուշարձանի՝ Շարայի լեռան ռեկրեացիոն-զբոսաշրջային գնահատումը:

Շարայի լեռը գտնվում է Շիրակի և Արագածոտնի սահմանին: Այն իրենից ներկայացնում է 2474 մ բարձրությամբ հրաբխային հսկայական մի կոն, որի հիմքի տրամագիծը հասնում է 5 կմ, իսկ պարագծի երկարությունը անցնում է 20 կմ-ից: Շարայի լեռան առաջացումը պայմանավորված է Արագածի հրաբխային գործունեությամբ: Այն սկսվել է դեռևս 60մլն. տարի առաջ և շարունակվել մինչև չորրորդական (1մլն. տարի առաջ): Հրաբխականության վերջին փուլում թթու լավաների արտաժայթքման հետևանքով էլ առաջացել է Շարայի լեռը:

Սույն հողվածում մեր կողմից ներկայացվում է Շարայի լեռը՝ որպես երկրաբանական հուշարձան, որը կարող է օգտագործվել զբոսաշրջային նպատակներով:

Նկ. 1-ում պատկերված է թիվ 1 երթուղու սխեմատիկ կառուցվածքը, ինչպես նաև երթուղու ընդլայնական կտրվածքը: Երթուղին սկսվում է 2193 մ բարձրության վրա. այն նախատեսված է տարիքային բոլոր խմբերի զբոսաշրջիկների համար (բացառությամբ մինչև 10 տարեկան երեխաների): Այն իրենից ներկայացնում է քայլարշավային տուր, որի գլխավոր դիտարժան օբյեկտներն են հետաքրքիր երկրաբանական ձևերը, որոնք պահպանվել են Շարայի լեռան վրա:



Նկ. 1. № 1 զբոսաշրջային երթուղու քարտեզը և ընդլայնական կտրվածքը (կազմեց Ռ. Սարգսյանը):



Նկ. 2. Շարայի լեռան թեքությունների սխեմատիկ պատկերը (կազմեց Ռ. Սարգսյանը):

Երթուղին հեշտ անցանելի է: Առավելագույն թեքությունները արևելյան լանջերին հասնում են 35-38%, ինչը իջնելու պարագայում մեծ դժվարություն չի ներկայացնում: Երթուղու ամենաբարձր կետը Շարայի լեռան գագաթն է (2774մ), որից բացվում է 360° դիտողականությամբ հիասքանչ տեսարան դեպի Արագած լեռը և Շիրակի դաշտը: Զբոսաշրջիկներին հետաքրքիր կարող է լինել նաև լեռան գագաթին գտնվող Սբ. Հովհաննես մատուռը: Վերջինս կառուցվել է 1842-1846թթ.: Որպես շինանյութ՝ մատուռի համար օգտագործվել է տեղական տուֆը: Ըստ ավանդության՝ մատուռի տեղում ամփոփված են Սուրբ Հովհաննես Մկրտչի մասունքները:

Շարայի լեռան թեքությունների սխեմատիկ պատկերը ցույց է տալիս, որ լեռնազանգվածի ռելիեֆի 60-65%-ը ունի մինչև 30° թեքություն, ինչը մեծ դժվարություն չի ներկայացնում քայլարշավային տուրերի համար: Նման թեքություններ կարելի է օգտագործել նաև լեռնադահուկային սպորտի համար [3, էջ 12]:



Նկ. 3. Շարայի լեռան կրաքարային առաջացումները (լուսանկարը՝ Հ. Սարգսյանի):

Շարայի լեռան վրա զբոսաշրջային օբյեկտները բավականին շատ են, բայց դրանցից ամենանշանավորները կրաքարային ժայռերն են, որոնց մեջ ձևավորվել են քարանձավներ: Շարայի լեռան կրաքարերը կավճի հասակի են [1, էջ 228]: Դրանք ունեն բաց մոխրագույն երանգ և թեք շերտերով իջնում են դեպի լեռան ստորոտը: Կրաքարային առաջացումները կենսածին են, շատ տեղերում շերտերի միջև երևում է

լճային նստվածքների կուտակումներ, ինչը վկայում է այն մասին, որ տարածքը պարբերաբար ծածկվել է ջրով:

Երկրաբանական տուրերը նախընտրող զբոսաշրջիկները այստեղ կարող են գտնել բույսերի և կենդանիների բրածո մնացորդներ՝ հավաքածուների համար:

Շարայի լեռան ստորոտում ջրասառցադաշտային նստվածքների շերտերում կան քարանձավներ, որոնց տեղացիները անվանում են «Մաղարա»: Հազարամյակներ առաջ այն ծառայել է որպես բնակատեղի: Ժայռափոր քարանձավը երկհարկանի է, հավանաբար առաջին հարկում տեղավորել են ընտանի կենդանիներին, իսկ երկրորդ հարկում բնակվել են մարդիկ: Ենթադրում են, որ վաղ քրիստոնեության շրջանում քարանձավները ծառայել են որպես ճգնավորների մենաստան:



Նկ 4. Հողմահարված կրաքարեր Շարայի լեռան վրա (լուսանկարը՝ Հ. Սարգսյանի):

Ընդհանրացնելով կատարված հետազոտական աշխատանքը՝ կարելի է կատարել մի քանի եզրակացություններ.

1. Հանդիսանալով բնության հուշարձան՝ Շարայի լեռն ունի բավարար պայմաններ զբոսաշրջային տուրերի կազմակերպման համար, իսկ ռելիեֆի մորֆոմետրիական տվյալները թույլ են տալիս կազմակերպել ոչ միայն կարգային, այլև ոչ կարգային երթուղիներ առանց որոշակի նախնական ֆիզիկական պատրաստվածության:
2. Շարայի լեռան երկրաբանական կառուցվածքը, մակերևույթին պահպանված և ակնառու երկրաբանական ձևերը դիտարժան են և կարող են հանդես գալ որպես զբոսաշրջային օբյեկտներ:

3. Շարայի լեռան տարածքում, բացի հետաքրքիր երկրաբանական ձևերից, առկա են նաև պատմամշակութային հուշարձաններ, ինչը ավելի է մեծացնում լեռան զբոսաշրջային նշանակությունը:

Իրականացված դաշտային աշխատանքների արդյունքում մեր կողմից կան մի քանի առաջարկություններ, որոնց հաշվի առնելը կարող է նպաստել ինչպես զբոսաշրջիկների հոսքի աճին, այնպես էլ տեղական բնակչության սոցիալական պայմանների բարելավմանը:

Այս առումով շատ կարևոր է տեղական և կոնկրետ Շարայի լեռան տարածքների խոշորամասշտաբ քարտեզների հրատարակումը, որը կօգնի զբոսաշրջիկներին առավել լիարժեք տեղեկություն ստանալ երթուղու անցկացման վայրի մասին, ինչպես նաև խոսափել լեռան վրա մոլորվելուց, հատկապես աշնանային ամիսներին, երբ հաճախակի դիտվում են մառախուղներ:

Երթուղիները առավել հետաքրքիր դարձնելու համար անհրաժեշտ է բացի երկրաբանական ձևերից երթուղիների մեջ ներառել նաև պատմամշակութային հուշարձանները, ինչը կնպաստի զբոսաշրջիկների թվի ավելացմանը:

Կարևոր է նաև Շարայի լեռան հարակից համայնքներում (Գեղանիստ, Սպանմդարյան և այլն) օժանդակել փոքր հյուրատների և ոչ մեծ հասարակական սննդի օբյեկտների կառուցմանը, ինչը կբարելավի զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացումը:

РЕКРЕАЦИОННАЯ ОЦЕНКА ГЕОЛОГИЧЕСКИХ ПАМЯТНИКОВ ШИРАКСКОЙ ОБЛАСТИ(НА ПРИМЕРЕ ГОРЫ ШАРА)

Мартиросян Л. М., Саргсян Р. С., Абраамян В. М., Саргсян Э. М.

В Ширакской области для развития экотуризма большое значение имеют памятники природы. Это природные объекты, представляющие особую научную и историко-культурную ценность.

Следует отметить, что памятники, установленные на территории Ширакской области, не в полной мере представлены в туристических пакетах нашей Республики. Кроме того, не все памятники, зарегистрированные в списке, имеют паспорта, предусмотренные Законодательством РА. Границы и охранные зоны памятников природы также четко не определены.

В Руководящих принципах «Категория охраняемых территорий МСОП» памятники природы относятся к третьей категории и

определяются как территория, которая имеет, по крайней мере, одну и несколько специфических характеристик. Они могут быть как природными, так и культурными.

В статье 1 Закона РА «Об особо охраняемых природных территориях» термин «Памятник природы» определяется как «...обособленный природный объект, имеющий особую научную, историко-культурную и эстетическую ценность».

В Ширакской области большой интерес вызывают геологические памятники. Они образовались в результате геологических явлений (вулканизм, разломы, сдвиги слоев и т. д.). Геологические памятники могли быть как отдельными, так и комплексами. В геологических памятниках выделяются вулканические сооружения, которые представлены в виде вулканических конусов, кратеров, лавовых потоков, пещер и т. д.

Ключевые слова: природные памятники, рекреационная оценка, вулканический конус, туризм, карта, пещера.

**RECREATIONAL ASSESSMENT OF GEOLOGICAL MONUMENTS OF
SHIRAK REGION (ON THE EXAMPLE OF MOUNTAIN SHARA)
Martirosyan L. M., Sargsyan R. S., Abrahamyan V. M., Sargsyan H. M.**

In Shirak region for development of Ecotourism natural monuments has a great importance. They are natural objects, which represent specific scientific and historic-cultural value.

It should be mentioned that monuments fixed in the territory of Shirak region are not fully represented in the touristic packages of our Republic. Besides, not all monuments registered in the list has their passports which are implied by RA Law. Borders and preservation zones of natural monuments also are not clearly stated.

In the Guidelines of «IUCN Protected Areas Category» natural monuments belong to the third category and defined as an area which has at least one and several specific characteristics. It could be either natural, or cultural.

In the article 1 of «About specific preserved natural territories» Law of RA «Natural monument» term defines as «...separated natural object with specific scientific, historic-cultural and esthetic value».

In Shirak region geological monuments make a big interest. They have been formed in the result of geological phenomena (volcanism, faulting, layer shifts etc.). Geological monuments could be as separate, and as complexes. In geological monuments volcanic constructions stand out, which are represented as volcanic cones, craters, lava flows, caves and etc.

Keywords: natural monument, recreational assessment, volcanic con, tourism, map, cave.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Бальян С. П. Структурная геоморфология Армянского нагорья и окаймляющих областей. Ереван. Изд. ЕГУ. 1969. 390 с.
2. <https://www.iucn.org/theme/protected-areas/about/protected-areas-categories/category-iii-natural-monument-or-feature> (07.09.2021)
3. Колотова Е. В. Рекреационное ресурсоведение. Москва. «Менеджмент». 1999. 46 с.

Տեղեկություններ հեղինակների մասին

Մարտիրոսյան Լ. Մ.- աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Շիրակի պետական համալսարան
Էլ. փոստ՝ mlevon2003@mail.ru

Մարգարյան Ռ. Մ.- երկրաբանական գիտությունների թեկնածու
Շիրակի պետական համալսարան
Էլ. փոստ՝ rudolf-sargsyan@mail.ru

Աբրահամյան Վ. Մ.- պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
Շիրակի պետական համալսարան
Էլ. փոստ՝ v_abrahamyan62@mail.ru

Մարգարյան Հ. Մ.- մագիստրանտ
Շիրակի պետական համալսարան
Էլ. փոստ՝ hermine.sargsyan.95@mail.ru

Տրվել է խմբագրություն՝ 18.06.2021
Գրախոսվել է՝ 16.11.2021